

№ 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Սահմանադրություն

№ 23

ԲԺ. Ա. ԴԱՎՈՐՅԱՆ

# ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻՖ

ՅԵՐԵՐՈՐԴ ՀՐԱՏՎԱԾԱԼԻԹՅՈՒՆ

616.9  
2-15

Պ Ա Տ Հ Ա Տ — Բ Ժ Հ Ա Տ Տ Բ Ա Ժ Ի Ն  
ՅԵՐԵՎԱՆ — 1934

30 JUL 2010

616-9

2-15

ԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
№ 23 ՍՍԸՆԹԱՑ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ № 23

ԲԺ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

# ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻՖ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

(ՆԿԱՐՆԵՐՈՎ)

ԳԵՏԴՐԱՏ ԲՈՒԺԴՐԱՏԱՏՐԻ Ն  
ՅԵՐԵՎԱՆ—1934



## 1. ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻՖ

Վորովայնի տիֆն ամենատարածված հիվանդություններից մեկն է: Ցարական Ռուսաստանում ամեն տարի վորովայնի տիֆով հիվանդանում ելին մի քանի հազար հոգի: Նրա համաձարակն ուժեղ է լինում սովի և պատերազմի տարիներին:

Իմպերիալիստական պատերազմի տարիներին, Գատկապես 16 և 17 թվերին, տիֆը խոչորգուհեր պատճառեց Կովկասյան Փրոնտում:

Իսկ 19 թվի յերկրորդ կիսում Հայաստանում վայր չկար, ուր տիֆ հիվանդությունն առատ հոնձ չունենար:

Միայն Յերեվան քաղաքում տիֆով հիվանդների թիվը շուրջ յերեք հազար եր հաշվում:

Խորհրդայնացումից հետո վորովայնի տիֆով հիվանդների թիվը մեղմնում զգալի չափով պակասել է. սակայն նրա վերջնական լիկիդացիան պահանջում է մի շարք լուրջ ու պլանային ձեռնարկումներ:

Վորովայնի տիֆը սուր վարակիչ հիվանդություն է: Նա ունի իր հատուկ մանրեն:

Առաջին անգամ, 1889 թ., այդ մանրեյի դոյլությունը, համարյա թե միաժամանակ,

Պատ. իսրայելի բժ. Ա. Զազարյան  
Տիկ. իսրայելի Դ. Զենյան  
Սրբադրիչ Քար. Հակոբյան

Դւամիւտ № 8470. Հրամ. № 2902, պատ. № 433, ուժում 3000

Հանձնված և արտադրության 2 մարտի 1934 թ.

Ստարադրված և տպագրության համար 21 մարտի 1934 թ.

Գետերտի տպարան - Երևան




6 596-53



Յերեվան հանեցին յերկու գիտնականներ՝ Եթեր տը և Կոխը: Յերկուսն ել իրենց փորձերը կատարում եցին հիվանդների կղկղանքի և տիֆով մեռածների աղիքների վրա:

Վորովայնի տիֆի մանրեն նման ե մի շատ էլարճ, հաստ ու կլոր ծայրերով ցուպիկի, վորը հասարակ աչքով անհնար ե տեսնել: Նրան կարելի յե տեսնել միայն խոշորացույցի տակ, այն ել, յերբ մեծացնում ենք 600—1000 անգամ: Այդչափ մեծացնելուց հետո յել նա յերեւում ե փոքրիկ քորոցի գլխի չափ:

Ծովիկի յերկու ծայրերին կան 8—12 թարթիչներ, վորոնց միջոցով նա կատարում ե իր շարժումները:



Նկ. 1. Ա վորովայնի տիֆի մանրեները  
Բ նույնը չափազանց մեծացրած: մի քանի  
Բ նույնը չափազանց մեծացրած: միլիմոն:

Վորովայնի տիֆի մանրեները գտնվում են հիվանդի արտաթորություններում, մեզում, արյան մեջ, քիչ անգամ քրտինքի մեջ, թջում:

Դիագնոստիչան ժամանակ մեծ չափով վորովայնի տիֆի մանրեների յենք հանդիպում ա-

զիքներում, վայծախի և մանալանդ, լեզու վամփուշտի մեջ:

Վորովայնի տիֆի մանրեները շատ դիմացգլուն են և կենսունակ նաև մարդկային որդանիզմից դուրս: Նրանք չեն դիմանում միայն արելի լույսին և չորության. այն ինչ մեծ դիմացկունություն են հայտաբերում բարձր աստիճանի ցրտին:

Ցելսիի 70 աստիճան տաքության մեջ վորովայնի տիֆի մանրեները քառորդ ժամից հետո վոչնչանում են: Թույլ տաքությունը համարվում է 37 աստիճանը, մարդու մարմնի տաքությունը: 40 աստիճանից հետո նրանց աճումը նորից գանդաղում է:

Վորովայնի տիֆի մանրեներն իրենց կենսունակությունը (2-3 ամիս) պահպանում են ջրի մեջ և հողում, ինչպես և յուղի ու պանրի մեջ: Կաթի մեջ համեմատարար կարճատելվ կյանք տևեն: Կարճատելվ կյանք ունեն նաև յեփած ջրի մեջ, ուր սննդաբար նյութեր քիչ կան:

Յերկար ժամանակ վորովայնի տիֆի մանրեներն ապրում են կեղտի մեջ, ջրհորներում և կանդնած ջրերի մեջ: Որդանիզմի մեջ համենից յերկար մնում են լեզու վամփուշտում: Այնպես վոր հիվանդությունից առողջացած մարդը գեռես յերկար ժամանակ իր մեջ կրում ե տիֆի մանրեները:

Վորովայնի տիֆի բացիլները դիմացկուն են նաև ուժեղ թույնի հանդեպ: Սուլեմայի 1,0 տոկոս, իսկ կարբուլյան թթվուտի 3 տոկոսանի

խառնուրդները կես ժամից հետո միայն կորո-  
ղանում են վոչչացնել վորովայնի տիֆի  
մանրեները:

## 2. Ի՞՞ՉՊԵՍ Ե ՎԱՐԱԿԸ ՏԱՐԱԾՎՈՒՄ

Վորովայնի տիֆի գլխովոր տարածողները  
հիվանդներն են: Վարակը տեղի յէ ունենում  
գլխավորապես հիվանդի հետ ունեցած շփումից  
կամ ջրի և սննդանյութերի միջոցով:

Վորովայնի տիֆով հիվանդանում են այն  
ժամանակ, յերբ նրա մանրեն վորեե ձելով ընկ-  
նում ե մարդու մարսողության որդքանը:

Վարակի լավագույն միջոցներից մեկը  
հիվանդի գործածած ամաներն են, յեթե նը-  
րանք մաքուր չեն պահպում և ախտահան-  
վում: Ախտահանման սովորական ու լավ ձե-  
վը տաք ջրի մեջ ամանեղենների յեռացնեն ե:

Ամանեղենների միջոցով վարակը տարած-  
վում ե մանավանդ գյուղերում, ուր մի ամանք  
մեջ ուտելը «պապենական հին սովորություն»  
և, վորի դեմ խստորեն պիտի պայքարել:

Դիտված ե, վոր մեծ տներում, ուր խիտ  
բնակչություն կա, վարակման դեպքերը հա-  
ճախ են լինում: Նման տները կոչվում են «տի-  
ֆոտ տներ», ուր կեղտի և նեղվածության մեջ  
բազմանդամ բնտանիքներ են ապրում իրար վրա  
կուտակված:

Վարակման գլխավոր քսկտորներից պի-  
տի համարել ջուրը: Ջրից առաջացած վարա-

կը միշտ ել մասսայական բնույթ ունի, քանի  
վոր վարակված ջրից միաժամանակ խմում են  
շատերը:

Ջրերը վարակվում են գլխավորապես  
մարդկային կեղտատություններից: Արտաք-  
նոցները ունենալը մեզանում նոր ե, նա մասսա-  
յական անհրաժեշտություն դեռ չի դարձած,  
դրա համար ել մարդկային արտաթորու-  
թյունները տեղի յեն ունենում, հատկապես  
գյուղերում, բացովիյա, բնակարանների շուր-  
ջը, կամ լավագույն դեպքում, մարազնե-  
րում, գոտերում ու չափարների տակ: Անձրե-  
ների ժամանակ այդ արտաթորություններն  
այլ կեղտերի հետ քշում թափվում են գետե-  
րի, ու աղբյուրների մեջ, վորտեղից վերց-  
նում են խմելու ջուր և վարակվում:

Բայց աղտոտված ջրերից կարելի յէ վա-  
րակվել նաև լիացվելով ու լողանալով, կամ  
թե չե, յերբ լիացք են անում կամ մեջն աման-  
ներ ըլլանում:

Վարակվել կարելի յէ նաև պտուղներից,  
կանաչեղենից ու կաթից, յերբ նրանք այս կամ  
այն ձելով մանրեններ են պարզունակում:

Վարակի աղբյուր կարող է ծառայել նաև  
հողը: Վերը մենք արգեն նշել ենք, վոր հողը  
վորովայնի տիֆի մանրենների համար լավա-  
գույն միջավայրն ե, ուր արագությամբ ա-  
ճում են ու զարգանում ամեն տեսակի մանրե-  
ներ:

Կոշիկների վարակի բացիները կարող են  
ներս թափանցել մեր բնակարանները:

Սակայն վորովայնի տիֆի չափելով տարա-  
ծողները ճանձերն են, վորոնք իրենց թաթերով  
ու թեվերով ազտոտություններն ու մանրեները  
փոխադրում են սննդանյութերին, և նրանց ու-  
տելով վարակվում ենք:

Այստեղից հետեւություն. նաևների ու մի-  
ջատների դեմ պայքարն անհրաժեշտություն է,  
վորը յերբեք մոռացության չպիտի մատնենք:

### 3. ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻՖԻ ԸՆԹԱՑՔԸ

Ինչպես բոլոր վարակիչ հիվանդություն-  
ները, այնպես և վորովայնի տիֆն ունի իր  
գաղտնի զարգացման շրջանը, վորի տեվողու-  
թյունը 2-3 շաբաթ է:

Վորոշ պայքաններում ուժեղ որդանիզմը  
չի յենթարկվում վարակի ազդեցության և ա-  
ռանձին հիվանդագին յերեւութներ չի արտա-  
հայտում, չնայած վոր նրա մեջ կան մանրեներ:  
Նման հիվանդները պարզապես կոչվում են  
վորովայնի տիֆի մանրեներ կրողներ: Բայց  
սովորական ձևու այն ե, վոր գաղտնի շրջանից  
հետո ականատես ենք վորոշ հիվանդագին նը-  
շանների, այն ե՝ առաջանում ե ընդհանուր  
թուլություն, հիվանդն ախորժակը կորցնում  
է, գլուխը ցավում, վորոշ մարմինը կոտրատ-  
վում է: Այդ յերեւութներն աստիճանաբար  
ուժեղանում են. հիվանդը դողացնում է, վո-  
րից հետո բարձրանում է տաքությունը, լի-

զուն չորանում ե ու սպիտակում, առաջանում  
ե ծարավի զգացում. ինքնազգացումը դնալով  
վատանում է:

Հիվանդն անկողին ե մտնում:

Վորովայնի տիֆը սովորաբար 3-4 շաբաթ  
ե տևում, համարելով սկիզբը տաքության  
բարձրանալը, իսկ վերջը՝ տաքության ան-  
կումը: Ինում են և թեթև տեսակներ, յերբ  
հիվանդությունը մեկ կամ յերկու շաբաթ ե  
տեվում, կամ վոտքի վրա յէ անցնում: Սա-  
կայն դրանք յեզակի գեպքեր են:


Տիֆի ծանր տեսակը համարվում ե այն,  
վոր հիվանդությունը տեվում է 3-4 շաբաթ:  
Առաջին շաբաթում տաքության աստիճանը  
բարձրանում է, 2-3 շաբաթում հասնում է իր  
գաղաթնակետին և մնում ե կանգնած, իսկ 4-րդ  
շաբաթում սկսում է հետզհետե իջնել:

Վորովայնի տիֆի տաքությունն այնքան  
բնորոշ է ու ինքնատիպ, վոր վոտքը ի շատե  
փորձված բժիշկը կարող է առանց սխալի վորո-  
շել հիվանդությունը, անդամ առանց հիվան-  
դին տեսնելու: Այնպես վոր, տաքության կա-  
նոնավոր ու ժամանակին չափումները մեծ կա-  
րեվորություն ունեն դիաղնողի համար:

Հիվանդության ամենածանր ժամանա-  
կամիջոցը 3-րդ շաբաթն է համարվում և ահա  
այդ ժամանակ ե, վոր բժիշկը պիտի լարե իր  
վողջ ուշադրությունը:

Այդ շրջանում հիվանդը կորցնում է իր գի-  
տակցությունը, զառանցել ե սկսում, ուժեղ

շարժումներ ե անում, մի կողմից մյուսն է շըրջվում, կամ, ընդհակառակն, անկողնի մեջ անշարժանում և և աչքերն ել մի կետի հառում:



Հիվանդի մաշկը չոր ե լինում ու տաք, շըրժումները չոր ու ճաքճքված, լեզուն սպիտակ ու ծածկված փառերով. բերնից ծանր հոտ ե դալիս: Փորը փոքր ինչ տողած ե լինում ու կաղերով լի, հաճախ ձեռք տալիս ցավում է: Սրտաթորությունը ջրիկ է, ծանր հոտով ու կանաչավուն, ինչպես սովորաբար ասում են՝ «սիսեռի ապուրի» յե նման:

Սկզբի շրջանում հիվանդը կարող ե նաև փորկապություն ունենալ: Առաջին շաբաթվա վերջը կտմ յերկրորդի սկզբը հիվանդի մարմնի վրա յերեւած ե կարմիր ցան, շատ փոքր քորոցի զլիի նման: Մատով սեղմած ժամանակ նրանք իրենց կարմրությունը կորցնում են:

Յերկրորդ շաբաթվա վերջը կամ 4-րդի սկզբը տաքությունն սկսում ե աստիճանաբար ընկնել, լեզվի չորությունն անցնում է, հիվանդի ինքնազգացումը լավանում է, 4-րդ շաբաթվա վերջերից հիվանդն արդեն կազդռւրվել ե սկսում: Նրա ախորժակը վերականգնում է, քունը կանոնավորվում է, մի խոսքով, հիվանդն արագությամբ ապաքինվել ե սկսում:


Սակայն հիվանդությունը միշտ ել նման բարեհաջող յելք չի ունենում. Հաճախ չնչին չեղում դիետից կամ անուշաղիք խնամք, մեկ ել տեսաք հիվանդը նորից ծանրացավ, նորից յերեվաց տաքությունը լուծ, թուլություն: Մահցությունը սովորաբար 3-րդ շաբաթվա վերջում ե տեղի ունենում:

Տարիքով ու թույլ մարդկանց տաքության

աստիճանը թեև համեմատաբար ցածր է լինում, պակայն նրանք դժվարությամբ են հիվանդության դիմանում:

#### 4. ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻՖԻ ԲԱՐՁՐԱԹՅՈՒԽՆԸ

Տիֆի գլխավոր արտահայտությունը տեղի է ունենում աղիքներում, դրա համար ել հիվանդությունը կոչվում է «աղիքային կամ վորվայնային»: Մանրեները մտնելով աղիքների մեջ, նրանք ներս են թափանցում հուզաթաղանթի և ղեղձերի խորքերը, առաջ բերելով բորբոքում և ուռուցքներ, վորոնք վերածվում են վերքերի: Այդ վերքերը յերբեմն կարող են մեծ տարածություն բռնել:



Նկ. 3. Վորովայնի տիֆով հիվանդի աղիքներում  
գոյացած վերքերը


Նման դեպքերում դիետից շեղումը կարող է ծանր հետեանքներ ունենալ կարող և աղիքային արյունահոսություն առաջ բերել, կամ թեպարզապես ծակել աղիքը, վորի հետեանքը հիվանդի համար լինում և մահցու:

Բայց կանոնավոր խնամքի դեպքում այդ վերքերը, յերրորդ շաբաթվա վերջը, սովորաբար սկսում են առողջա-

նար: Դրա համար եր վորովայնի տիֆի ժամանակ անհրաժեշտ է, վոր հիվանդն անկողնում հանգիստ մնա, ուժեղ շարժումներ չանի և վոչ ել դըժվարամարս կերպուրներ ուտի:


Վորովայնի տիֆի ժամանակ սովորաբար մեծանում էն փայծախն ու լարդը: Տեսական վարդը տարձրությունից սիրտը փոփոխությունների յեւթարկվում և թուլանում:

Այսան անոթները, հատկապես յերակները՝ բորբոքվում են: Հաճախ ուղեղը կամ նրա թաղանթը տիֆի մանրեների արտադրած թույնից ուռչում ու թունավորվում է, վորին հետեւում են մի շաբք ծանր յերեվույթներ. Հիվանդը կորցնում է գիտակցությունը, ցնցումներ և ունենում, զառանցում և և գլխի ուժեղ ցավեր ունենում:



Նկ. 4. Վորովայնի տիֆով հիվանդի առաջանական աստիճանը աղիքների գերբեր ժամանակ


Վորովայնի տիֆի բարդություններից ամենածանրը թոքերի բորբոքումն է, վորն առանձնապես վտանգավոր է տարիքավոր հիվանդների համար:



Նկ. 5. 1914-17 թ. թ. վորովայնի տիֆի դեմ կատարվող պատվառի տվյալները ֆրանսիական զօրամտաերում:

Ծանր հիվանդություն պիտի համարել նաև յերկար, միևնույն դիրքով պառկելուց առաջացած վերքերը, վորոնք դժվար են բռնժում և մեծ անհանգստություն են պատճառում հիվանդին: Նման վերքերն առաջ են զալիս սովորաբար վատ խնամքից՝ ու աղտոտ պահելուց:

Հաճախ վորովայնի տիֆին հետեւում են մարմնի մասերի պարալիչ, հատկապես վերջավորությունների, վողնաշարի ծռություն, լինում են հոգեկան խանգարումներ, անդամ խելագարություն:



Նկ. 6. Վորովայնի տիֆը մշնչ հեղափոխության  
և Կարմիր բանակներում:  
Ա—վորովայնի տիֆի շարժումը,  
Բ—սրսկումների տվյալ արդյունքը.

Հղի կանայք վորովայնի տիֆի ժամանակ հաճախ վիժուալ են և կամ ժամանակից առաջնորդներ ունենում:

Տիֆն անցնելուց հետո հիվանդի մարմինը  
թեփուտվում է, գլխի մազերն ել ուժեղ թափ-  
վում։ Դրա համար մշտական է անհրաժեշտ և վորո-  
վայնի տիֆուլ հիվանդների մազերն արմատից  
վերցնել։

### 5. Հիվանդի ԽՆԱՄՔԸ

Վորովայնի տիֆուլ հիվանդների համար  
հատուկ գեղեց չկան, հետեապես մեծ նշանա-  
կության ունի խնամքը։

Ամենից առաջ հիվանդի սենյակը պետքն  
լինի ընդարձակ, լուսառատ ու մաքուր։ Հարկա-  
վոր է որը մի քանի անդամ սենյակի ողջ փո-  
խել. լավ է տաք յեղանակներին սենյակի զու-  
ռը կամ պատուհանը բաց թողնել, իսկ ցուքա-  
ժամանակ՝ ողանցքը։

Հիվանդի անկողինը վոչ շատ փափուկ է  
լինելու և վոչ ել շատ կոշտ։ Փափուկ անկողի-  
նը նպաստում է հիվանդի առանց այն ել բարձր  
տաքության պահպանմանը և մեկ ել՝ կարող ե  
առաջադնել վերքեր, յերբ հիվանդը յերկոր  
ժամանակ միենույն դիրքում մնում է պառկած։  
Լավ է հիվանդի ներքնակը լինի ձիու մազից,  
ծովային խոտից, կամ ծղոտից։

Պիտի խիստ հօկել հիվանդի սպիտակեղենի  
մաքրությանը. նրանց աղտոտված գեղքում  
պիտի փոխել և հիվանդի մարմինն ել խնամքով  
մաքրել։

Սենյակը շատ տաք չպետք է լինի. լավ է  
պահել մեմյուրը 14-15 աստիճան տաքության

մեջ։ Հիվանդին պիտի ծածկել ամառային վեր-  
մակով կամ սավանով, բացի այն դեպքերից,  
յերբ նա դողացնում է։

Հիվանդը մեծ կարիք ունի հանգստի, մա-  
նավանդ, հիվանդության 3-րդ և 4-րդ շաբաթ-  
ներին, յերբ հիվանդի յուրաքանչյուր ուժեղ  
շարժում սպառնում է առաջացնել բարդու-  
թյուն։

Տիֆուլ հիվանդի ամանեղենը պիտի պա-  
հել առանձին, միևնույն սենյակում։ Նրանցով  
չպիտի ոգտվեն ուրիշները, կարող են վարակ-  
վել։

Հարկավոր է, խստիվ արգելել ճանճերի  
մուտքը հիվանդի սենյակը, այլապես նրանք  
կարող են վարակը փոխադրել հարեան բնա-  
կարանները։

Բարձր տաքության ժամանակ հիվանդի  
գլխին պիտի զնել սառույցի կամ սառը ջրով  
կոմպրեսներ։ Կոմպրեսները թեթեացնում են  
հիվանդի գլխի ցավը, զառանցանքն ու ընկ-  
ճվածությունը։

Վորքան կարելի յե, հիվանդին հաճախ պի-  
տի յեռացրած սառը ջուր տալ խմելու։ Ուժեղ  
ծաբալի դեպքում ջրի վրա կարելի յե ավելաց-  
նել լիմոնի հյութ կամ քաղցրավենիքի սիրոպ։  
Լավ է ջրի փոխարեն տալ սառը թեյ՝ ավելաց-  
րած նույն հյութերը։

Բարձր տաքության ժամանակ լավ է հի-  
վանդի մարմինը չփել քացախաջրով, սպիտի  
խառնուրդով կամ ողըկալոնով։ Շփումները

Թարմացնում ու ամբակնդում են հիվանդի ներփերը:

Վորովայնի տիֆով հիվանդների համար լավ են գոլ վաննաները (ռեմյուրի 27-28 աստիճանի) սակայն վաննաները պիտի նշանակի բժիշկը:

Հիվանդի լեզուն և բերանը պիտի մաքուր պահել: Հաճախ հիվանդի լեզուն պիտի մաքրել բորնի ջրի մեջ թաթախած բամբակով և նույն խառնուրդով վողողել տալ բերանը:

Հիվանդապահ քույրը կամ ընտանիքի անդամները խնամքի ժամանակ պիտի հագնեն խալաթ և հաճախ ձեռքերը լվանան սապոնով ու ախտահանեն սուլեմայի խառնուրդով, մանավանդ ուտելուց առաջ:

Սոողջանալուց հետո լավ ե քննության յենթարկել հիվանդի կալը (կղկղանքը)՝ ստուգելու /համար, թե վարակի մահերեներ չկա՞ն արգյուք:

#### 6. ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻՖՈՎ ՀԻՎԱՆԴԻ ԲՈՒԺՄԱՆ ԼԱՎԱԳՐՈՒՅՑՆ ՎԱՅՐԸ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆ Ե

Վորովայնի տիֆը լինելով ծանր ու վտանգավոր հիվանդություն, նպատակահարմար և հիվանդին փոխագրել հիվանդանոց և այնուղինամել ու բժշկել: Սակայն վորոշ տեղերում հիվանդներին կարելի յե թողնել նաև տներում: Հիվանդանոց փոխագրելով հիվանդին, նախ՝ դրանով մենք մեծ չափով վարակի տարածման

առաջն ենք առած լինում և, յերկրորդ՝ հիվանդին զնում ենք բժշկի անմիջական հսկողության տակ. այնպես վոր վտանգի ժամկին, միշտ ել հնարավորություն կա հիվանդին շուտագույթ ողնություն հասցնել:

Ստուգված իրողություն և, վոր լավ սարքավորված և հմուտ ու փորձված բուժաշխատակիցներ ունեցող հիվանդանոցներում վորովայնի տիֆը մահացությունների չնշին տոկոս և տալիս, մինչդեռ տներում այդ տոկոսն անհամեմատ ավելի բարձր է: Յեվ դա շատ հասկանալի յե, քանի վոր հիվանդանոցում կան բուժման ու խնամքի բոլոր անհրաժեշտ պարագաները. մի բան, վոր դժվար է ստեղծել անգամ հպրուստ ընտանիքում:

Վորովայնի տիֆի ժամանակ մեծ կարեգորություն են ներկայացնում տաք վաննաները, սառն ու տաք կոմպրեսները, սրտի թուլության ժամանակ համապատասխան սրոկումները, բարձր տաքության, զառանցանքի կամ հիվանդի անդիտակից դեպքերում այս կամ այն անհրաժեշտ ու շատապ ողնությունը. պարագաներ, վոր կարող ե տալ միմիայն հիվանդանոցը:

Վորովայնի տիֆը, ինչպես տեսանք, սաւլիս և տարրեր-տարրեր բարդություններ՝ աղիքների ու քթի ծանր արյունահոսություն, թոքերի ըորբոքում, ուղեղալին ծանր յերեվույթներ և այլ, վորոնց ժամանակ յերբեմն անրաժեշտ են արագ միջոցառումներ կամ թե,

յերը բարձր տաքության ժամանակ հիվանդը  
հայտաբերում է նյարդայնություն ու դրդու-  
վածություն, որինակ՝ գուրս և ցատկում  
անկողնից, նման անակնկալ դիպվածներում  
անհրաժեշտորեն հարկավոր են լինում հերթա-  
պահին ողնող ռժանդակ ձեռքեր. և ահա, այս-  
ովիսի պարագաներում, միակ բավարարողը  
կարող է նորից հիվանդանոցը լինել:

Այլևս չենք խոսում այն մասին, վոր մաք-  
րությունը, վորը հատկապես մեծ անհրաժեշ-  
տություն է վորովայնի տիֆով հիվանդի հա-  
մար, նույնպես պատշաճ բարձրության վրա  
կարող է դրված լինել նորից հիվանդանոցում:

Հայտարակական առաջովության տեսա-  
կետից դարձյալ լավագույնը հիվանդանոցն են,  
մանավանդ, յեր հիվանդությունը տեղի ունի  
մութ ու խոնավ նկուղներում, ուր սո-  
վորաբար բնակությունները խիտ են:

Ամենախիստ հսկողություն պիտի նշանա-  
կել այնպիսի հիմնարկներում, վորոնք ներկա-  
յացնում են հասարակական սննդի կենտրոն-  
ներ, ինչպիսիք են՝ կաթնատնտեսական ու  
սննդամթերքների արտելները:

Ինչ տեսակետից ել մոտենալու լինենք,  
կտեսնենք, վոր հիվանդանոցային բժշկու-  
թյունն ու խնամքը, վորովայնի տիֆով հի-  
վանդների համար, անհամեմատ, ավելի ձեռն-  
ոտու և ոգտակար ե, քան թե տներում բուժվելը:  
Այնպես վոր, այն վայրերում, ուր հիվանդա-  
նոցներ կան, վորովայնի տիֆով հիվանդներին

առանց ուշացնելու պիտի փոխադրել հիվան-  
դանոց:

Վորովայնի տիֆով հիվանդի հիվանդանոցա-  
յին բուժումը Սկանդինավյան յերկրներում  
յերկու տասնյակ տարուց ավելի յե, ինչ որեն-  
քով դարձված ե պարտադիր:

#### 7. Հիվանդի ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Վոչ մի հիվանդ այնքան կարիք չունի կա-  
նոնավոր ու զգուշ կերակրման, վորքան վո-  
րովայնի տիֆով հիվանդները: Հիվանդու-  
թյան ընթացքն ու հաջող վախճանը զլիսավո-  
րապես կախալուծ են կերակրման յեղանակից:

Վորովայնի տիֆով հիվանդի աղիքները,  
ինչպես գիտենք, մինում են բորբռքված ու  
վերքերով ծածկված, հետեւսպես նրանց պի-  
տի տալ ջրալի, թեթև ու գյուրամարս կերա-  
կուրներ. լավ ե տալ յեփած կաթ. վորքան  
շատ, այնքան լավ, քանի վոր կաթը, բացի  
սննդաբար լինելուց ու ծաբավ հաղեցնող,  
նաև միզարեր ե: Առատ մեղի հետ միաժա-  
մանակ որդանիզմից զուրս են վանվում վորա-  
կի մանրեները: Կարելի յե տալ բուլյոն, զա-  
նազան ջրալի սուլեր՝ պատրաստված բրնձի,  
գարու և վարսակի մաննաներից, սակայն լավ  
հարած: Շատ հիվանդներ չեն սիրում մաքուր  
կաթ, այդ գեպքում կաթը պիտի տալ թեյի  
կամ կոֆեյի հետ: Աղտակար են՝ թորմ սե-  
րուցք, անխառն կամ թեյով, զանազան տեսա-  
կի կիսելներ: Լուծի ժամանակ լավ ե չերնի-

կոյի կիսելը, իսկ փորկապության դեպքում՝  
թթված շորը։ Վերջին պարագային լույ և  
նույնպես յեփուծ կամ խորոված ինձորը, ոտ  
կայն կուտերը հանդած։

Փորի ցավի կամ ծակոցների ժամանակ  
առանձնապես պիտի զգուշ լինել կերակրենե-  
րի հետ։ Բոլոր այն կերակուրները, վորոնք  
կարող են գրգռել աղիքները, պիտի խստիվ  
արգելվեն։ Վոչ մի դեպքում վորովայնի տի-  
ֆով հիվանդին չի կարելի տալ հաց, տապա-  
կոծ միս, բրոց և այլ նման գժվարամարս կե-  
րակուրներ, վորքան ել հիվանդը փափագի ու  
«սիրտն ել ուղենա»։

Հին ժամանակ վորովայնի տիֆով հիվանդ-  
ներին պահում եյին կիսաքաղց դրության  
մեջ։ Այդ մեթոդը ներկայումս դատապարա-  
ված է անգործության։ բժիշկները թեև ու-  
ժեղ սնամ կողմնակից են, սակայն կերակ-  
րումը պիտի լինի չափավոր ու հաճախակի։  
միանգամից կուշտ ուտելը վնասակար է, կա-  
րող է պատճառ դառնալ հիվանդի կյանքի վր-  
ատանգման։

Վորովայնի տիֆը յերկարատև ու մաշող  
հիվանդություն ե, դրա համար ել անհրա-  
ժեշտ է հիվանդի սննդան վրա հատուկ ուչա-  
զրություն դարձնել, մանավանդ հիվանդու-  
թյան վերջին չըջանում, յերբ հիվանդն սկսում  
է ապաքինվել։

Կերակրի փոփոխություններն ու նոր նշա-

նակումները պիտի կատարվեն քժշկի գիտու-  
թյամբ ու բույլտվությամբ։

#### 8. ՊԱՏՎԱՍՏԸ ՎՈՐՊԵՍ ԿԱՆԽԻՉ ՄԻԶՈՅ

Հակավորովայնային տիֆի դեմ տարվող  
պատվաստը գիտության լավագույն նվաճում  
ներկայ մեկը պիտի համարել։ Նա ևս հիմնված  
է նույն սկզբունքի վրա, ինչի վրա հիմնված  
են ծաղկի պատվաստը և հակադիֆուերիտի  
վակցինայի սրսկումը։ Ով մեկ անգամ տարել  
է ծաղկի, քութիւնի կամ վորովայնի տիֆի  
հիվանդությունը, նա յերկրորդ անգամ նույն  
հիվանդությամբ հազվագյուտ դեպքումն ե-  
րունվում, այն ել յերբ յերկար ժամանակամի-  
ջոց է անցնում։ Եշանակում է նրա որդանիզմը  
ձեռք է բերում իմունիտետ այդ հիվանդու-  
թյունների հանգեպ։ Ասել ե՝ հիվանդանոցի  
արյան մեջ առաջանում է հակաթույն՝ այդ հի-  
վանդությունների վարակի և նրանցից գոյա-  
ցած թունավոր նյութերի դեմ։

Այս յերեսույթը բժիշկները հիմք են ըն-  
դունում պաշտպանելու մարդուն վորովայնի  
տիֆից։ Մարդու մաշկի տակ ներարկում են  
վորովայնի տիֆի սպանած մանրեները։ Այդ  
ձեռք որդանիզմի մեջ առաջ է զալիս հակա-  
թույն, վորը և մարդուն պաշտպանում է տի-  
ֆի վարակման վտանգից։

Նման պատվաստը վորեւ լուրջ հիվանդա-  
դին յերեվույթ չի առաջացնում մարդու որ-  
դի վարակման վտանգից։

գանիզմի մեջ, բացի թեթև ցալից, վոր պատճառում ե ասեղը, մեկ եւ՝ առաջին պատվասահից հետո մարդն ունենում է չնչին տաքություն:

Պատվաստը մարդուն պաշտպանում է վորովայնի տիֆից՝ 12 ամիս, վորից հետո, հարկավոր դեպքում, պատվաստը նորից պիտի կը լինել:


Պատվաստի հետեւվանքները միանդամայն փայլուն են: Բազմաթիվ փորձեր ապացուցել են, վոր այն խոշոր մահացությունները, վորոնք տեղի ունեցին նախքան հակավորովայնային շիճուկի գյուտը, վերացել են նրա զործադրությունից հետո:

1911 թվին 2000 հոգուց բաղկացած ֆրանսիական մի զորամասում, համաձարակի ժամանակ, պատվաստվում են 1300 զինվոր, վորոնցից և վոչ մեկը չի հիվանդանում վորովայնի տիֆով, այնինչ 700 խուսափողներից 125 զինվոր վարակվում են ու 25 հոգի զոհ են տալիս համաձարակին:

Սակայն պատվաստի անհրաժեշտության ըստ պուլի ապացույցը տվել ե իմալերիալիստական պատերազմը: Վորովայնի տիֆի դեմ տարրված պարտադիր պատվաստը, կովող զորամասերում, մեծապես նվազեցրել ե վորո-

վայնի տիֆի դեպքերը զորքերի մեջ (տես նկար 5):

Ֆրանսիայում նախքան պատվաստի գյուտալ, 1895-1913 թվերին, այն ե՝ շուրջ 17 տար-



Փոքրթացքում վորովայնի տիֆից մեռել են 161.000 հոգի. ասել ե՝ տարեկան զոհ են գընացել 9000 հոգի:

Երբած թվերը փայլուն կերպով ապացուցում են հակավորովայնային տիֆի դեմ ստորև պատվաստի անհրաժեշտությունը,

վորպես կանխիչ միջոցներից հզորագույնը։  
Հետեապես աշխատելու յենք մեզանում ևս  
պատվաստի էլաղափարը աշխատավորության  
լայն մասսաների սեփականությունը դարձնել,  
անդամ պարսպադիր, յերբ համաճարակը  
սպառնում և աշխատավորությանը։

### 9. ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՎՐՈՌՎԱՅՆԻ ՏԻԹԻՑ

Վորովայնի տիֆից պաշտպանվելու հա-  
մար կան անհատական, հասաթակական և պե-  
տական նախազգուշական միջոցառումներ։

Անհատական նախազգուշության ժամանակ  
մարդիկ աշխատում են պաշտպանվել իրենց  
մերձավորների տիֆի վարակից։ Յեվ գլխավոր  
ինքնապաշտպանության միջոցն այն և, վոր  
նրանք համաճարակների միջոցին դործ չեն չո-  
ծում հում ջուր և վոչ ել լիացվում են այն  
ակունքներում, վորոնք կասկածվում են, թե  
կարող են վարակված լինել։ Վարակված  
ջրերում արգելվում են լողանալը, լիացը,  
ամանեղենի լիանալը։

Պիտի մի անգամ ըդմիշտ իմանալ, վար  
վորովայնի տիֆի, ինչպես և խոլերային հա-  
մաճարակների տարածման գլխավոր աղբյուրը  
ջուրն է։ Դրա համար ել այդ հիվանդությունները կոչվում են ջրային հիվանդություններ։

Վորովայնի տիֆի համաճարակի ժամա-  
նակ պիտի զգուշանեալ նաև հում կաթից, անեփ  
հանաչեղենից և պտուղներից։

Այսուհետեւ զգուշանալու յեն նրանք, ով-  
քեր անուղղակի կերպով չփման մեջ են վորո-  
վայնի տիֆով հիվանդների հետ։

Բոլոր քույրերը, հիվանդանոցային ծառա-  
յողները և ընտանիքների հիվանդապահ ան-  
դպամները, իրենց հերթապահությունից հետո,  
պիտի փոխեն իրենց հագուստները, լվացվեն,  
ախտահանվեն ասպա նոր հեռանան հիվանդի  
մոտից։

Սուր վարակիչ հիվանդությունների ժա-  
մանակ պիտի խստիվ արգելել հիվանդատեսու-  
թյունը. դա և՛ հիվանդների համար ե վատ,  
անհանգստացնում են, և՛ այցելուները կարող  
են վարակի տարածման պատճառ դառնալ։

Այն տներում, ուր վորովայնի տիֆով  
հինվանդներ կան, պիտի խնամքով պահվեն  
անդպամթերքներն ու ամանեղենները փակ պա-  
հարաններում; վորակեսզի ճանճեր չնստեն։  
Պիտի բոլոր հնարավոր միջոցներով պայքա-  
րել ճանճերի դեմ և վոչնչացնել։

Հիվանդի ամանեղենը, ամեն գործածելուց  
հետո, պիտի ջրի մեջ յեփել, իսկ ճերմակեղենը  
լվանալուց առաջ, նախորդ գիշերը պիտի պա-  
հել ալկալիների մեջ և յեփել։

Հիվանդի արտաթորությունները՝ կղկը-  
ղանքը, մեզը, թուքը և այլն, բոլորն եւ  
խնամքով պիտի հավաքվեն առանձին ամաննե-  
րի մեջ, ախտահանվեն ու նոր թափվեն ար-  
տաքնոցների մեջ։ Կարելի յեւ ախտահանել չը-

Հանգցրած կըով (10-20) տոկոս, կամ քլորակըով (5-10 տոկոս) :

Վարպես անհատական նախազգուշական միջոցներ պիտի ամենքի կողմից եւ պահպանվեն՝

ա) Ամեն անգամ ուտելուց առաջ սապոնով լվանալ ձեռքերը:

բ) Պիտի վոչչացնել ճանձերը և սննդաթթերքն ու ամանեղենը նրանցից խնամքով պահել փակ պահպաններում:

գ) Պտուղներն ու կանաչեղենը, ուտելուց առաջ, յայէլ լվանալ յեռացրած ջրով:

դ) Հում ջուր չխմել, խմելու դեպքում կամ ֆիլտրի միջոցով անցկացնել, կամ թե խմել բժշկությունից հետո միայն, կամ թե, յերբ աղբյուրի ջուր եւ վարակի վտանգ չկա:

է) Կաթը գործածելուց առաջ յեռացնել:

Եեվ վեջապես անհատական նախազգուշական միջոց պիտի համարել նսե վորովայնի տիֆի դեմ պատվաստվելը: Պատվաստն (աղահովում եւ հիմանդրության դեմ 9-12 ամիս: Համաձարակների ժամանակի պատվաստը յավագույն ինքնաղաշտպանության միջոցներից մեկն ե:

Պետական և հասարակական միջոցառումներն ամենից ազդուն և արմատականը պիտի համարել առհասարակ բոլոր վարակիչ հիմանդրությունների դեմ վարած պայքարների մեջ: Կոլեկտիվ միջոցառումներից գլխավոր

ե, ապահովել աշխատավորության ջրամատակարարման գործը, քանի վոր գիտենք, վոր վորովայնի տիֆի համաձարակի գլխավոր աղբյուրը վտրակված ջուրն եւ այդ վարակին ել հաճախ կարված եւ աղտոտված հողի հետ: Հետեւապես հասարակական ու պետական որդանները մտածելու յեն առաջին հերթին ապահովել մեր քաղաքների ու գյուղերի ջրամատակարարումը կանոնավոր ու աղահով հիմքերի վրա դնելով այն:

Գլխավոր միջոցառումներն են՝

ա) Պիտի վաղահովել աղջուրնակչության մաքուր ու առողջ խմելու ջրով: Դրահամար պիտի կառուցվեն ջրմռալներ, իսկ յեթե գավորոշ վայրերում դեռևս անհնար ե, պիտի հոգ տարվեն կանոնավոր ու առողջապահական պահանջներին համապատասխան ջրհորներ ունենալ:

բ) Սրապնոցներ ունենալը պարտադիր պիտի դարձնել մեր գյուղերում ու քաղաքներում: Յուրաքանչուր տուն պիտի ունենալիք առանձին արտաքնացը:

գ) Խօսիվ պիտի հսկել բնակարանների և արտաքնոցների մաքրության: Ամեն տուն պիտի ունենա իր հատուկ աղբի արկղը, վորոնց ձեվը պիտի առա սանիտարական բժիշկը: Այդ արկղները պիտի փակ պահել և հաճախ գատարել, վորպեսզի ճանձերը չբազմնան ու տարածեն վարակը:

գ) Հեղանդներին անհրաժեշտ և անմիջապես մեկուսացնել հիվանդանքներում կամ տներում, յեթե վերջիններում կան հարմարություններ:

ե) Համաձարակների ժամանակ վորովայնի տիֆի պատվաստը, պիտի պարտադիր դարձնել առաջին հերթին ժողովների գծով և ջրմուղու աշխատակիցների մեջ, դռնապանների, լվացարաբների և բժշկա-սանիտարական պերսոնալի ու զբարակոչիկների:

Իմ պերիալիստական լվատերազմի թամանակ հակալորովայնային տիֆի պատվաստը պարտադիր եր անգլիական, գերմանական և ցարական զորքերի համար, դրա համար ել հիվանդությունների ու մահացությունների թիվը մի քանի անգամ պակասեց:

1923 թվին կատարված փորձերը մեզանում ցույց տվին, վոր չպատվաստված 1000 հոգուց վորովայնի տիֆով հիվանդանում են միջին թվով 12 հոգի, իսկ պատվաստվածներից՝ միայն 2 հոգի: Չպատվաստված 1000 հիվանդից մեռնում են 10-ը, իսկ պատվաստվածներից և վոչ մեկը:

զ) Ամենից կարևորն ու անհրաժեշտը, դասանհիգինիկ գիտելիքների տարածումն և աշխատավոր ձայն մասսաների մեջ:

Յուրաքանչյուր բանվոր պիտի ըմբռնի ու գիտակցի անհատական, հասարակական ու պետական միջոցառությունների համար ու ժամանա-

կին գործադրության անհրաժեշտությունը: Իսկ դրա համար հիգինիկ գիտելիքների ուսուցումը պարտադիր պիտի դարձնել բոլոր տիպի գպրոցներում տնիստիր:



«Ազգային գրադարան



NL0279962

1934

7079

ԳԻՒԸ 20 ԿՈՊ.



Դ-ր Ա. Կազարյան  
Բրյուշնոյ տիֆ  
Գиз ССР Армении, 1934 թ., Էրևան